ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

Հ Ր Ա Մ Ա Ն Ը

«20» դեկտեմբերի 2017 թվականի № 158-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՎԱՍՏՎԱԾ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՂԱՄԱՍԻՑ ՀՐԱԺԱՐՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 58-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը և «ՀԵՐՈՒՀՈՒԾ» ՍՊ ընկերության 2017 թվականի սեպտեմբերի 13-ին թիվ 4 և նոյեմբերի 01-ին թիվ 6 դիմումները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1.«ՀԵՐՈՒՀՈՒԾ» ՍՊ ընկերությանը տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի օբյեկտ համարվող ընդերքի տեղամասից հրաժարման հավաստագիր:

2. Ուժը կորցրած ճանաչել՝ «ՀԵՐՈՒՀՈՒԾ» ՍՊ ընկերության ՀՀ Լոռու մարզի Քարատեղի պորֆիրանման գրանիտների հանքավայրի շահագործման համար, 2012 թվականի հոկտեմբերի 31-ին տրամադրված օգտակար հանածոների արդյունահանման թիվ ՇԱԹՎ-29/191 թույլտվությունը, 13.05.2013թ-ի թիվ ԼՎ-191ա լեռնահատկացման ակտը և լուծել 30.10.2012թ-ի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման ՊՎ-191 պայմանագիրը:

3. Ընդերքի գործակալության պետին՝

- 2-օրյա ժամկետում ծանուցել ընկերությանը հրաժարման հավաստագիրը ստանալու մասին.
- ապահովել համապատասխան գրառումների կատարումն օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին - ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթը ստացումից եռօրյա ժամկետում:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

6.Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ